ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

ՊԱՐԵՆԱՑԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Էկոնոմիկայի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Գյուղատնտեսություն, Էկոնոմիկա

Հանրային քննարկման ժամկետ

27/10/2022 - 12/11/2022

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 7 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 7 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

5 կողմ

2 դեմ

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

13/12/2022

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Թաթուլ Ստեփանյան 08.11.2022 17:45:10	Անսպառ են առարկությունները, թե բովանդակության և թե կառուցվածքի վերաբերյալ, առանց որևէ հետազոտության, համագործակցության, պատասխանատուների: Առաջարկում եմ հանել այս փաստաթուղթը շրջանառությունից, ձևավորել աշխատանքային խումբ ներառականության սկզբունքով և նոր փաստաթուղթ մշակել, մեծ շռայլություն է մեր նման երկրի համար, այսպիսի ռազմավարության ընդունումը:	Չի ընդունվել: Ռազմավարության նախագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից, մշակման գործընթացին աջակցություն է ցուցաբերվել Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից՝ ներգրավելով ինչպես միջազգային փորձագետներ, այնպես էլ հայկական խորհրդատվական կազմակերպություն: Բացի այդ նախագիծը ներկայացվել է քննարկման նաև բրիտանական հեղինակավոր «Չաթհամ հաուս» վերլուծական կենտրոնին: Այնուհետև սահմանված ընթացակարգով ներկայացվել է ՀՀ	

			բոլոր շահագրգիռ գերատեսչություններին, ինչպես նաև միջազգային մի քանի կազմակերպությունների, այդ թվում Համաշխարհային բանկի քննարկմանը: Բացի այդ, ռազմավարության նախագիծը քննարկվել է նաև Ազգային Անվտանգության խորհրդում և քննարկումների ու ստացված կարծիքների հիման վրա ենթարկվել է զգալի փոփոխությունների:	
2	Թաթուլ Ստեփանյան 08.11.2022 17:41:53	76. Ռազմավարության իրագործման արդյունավետ կառավարման և վերահսկողության նպատակով անհրաժեշտ է ստեղծել ՀՀ Պարենային անվտանգության ռազմավարության և գործողությունների ծրագրի իրագործման և վերահսկողության կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե): Ինչ նպատակ եք հետապնդում այսօրինակ մոտեցման դեպքում, ով է այս ռազմավարության կյանքի կոչելու պատասխանատուն: Ակնհայտ է, որ այս նախագծի հեղինակները հնարավոր ձախողումների այլ պատասխանատուներ են փնտրում: ՀԳ Դուք ինքներդ ևս չեք հավատում ձեր ռազմավարության հաջողությանը:	Ընդունվել է մասնակի:	Ռազմավարության 78-րդ կետը լրամշակվել է և ռազմավարության արդյունավետ կառավարման և իրագործման նպատակով մշտադիտարկման գործառույթը նախատեսվել է վերապահել ՀՀ փոխվարչապետի գրասենյակին:
3	Թաթուլ Ստեփանյան 08.11.2022 17:35:49	5.1 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 57. Հայաստանում պարենային անվտանգության հիմնախնդիրներն են. 1. Երկրում մակրոտնտեսական և ագրո-բնապահպանական անկայուն վիճակը՝ պայմանավորված նաև տեխնոլոգիական	Չի ընդունվել: Նախագծում առկա է բավարար վերլուծական հիմք ռազմավարությամբ նախանշված պարենային անվտանգության հիմնախնդիրները վեր հանելու համար:	

		զարգացվածության ցածր մակարդակով, 2. Արտաքին սպառնալիքներին դիմագրավելու պատրաստվածության անբավարար մակարդակը, 3. Պարենային անվտանգության համակարգի թերզարգացվածությունը և հիմնական պարենային ապրանքների ինքնաբավության ցածր մակարդակը, 4. Գյուղատնտեսության անբավարար զարգացվածությունը: Այս ձևակերպմանը հանգելու համար, լուրջ հետազոտության անհրաժեշտություն պետք է նախորդեր, ինչը կդառնար հաջորդիվ քայլերի տրամաբանական բացատրություն: Սույն ռազմավարության նախագիծը ոչ միայն այս մասով, այլ ընդհանրապես հեռու է բավարար կոչվելու կարգավիճակից, որոշ առումով կառաջարկեմ որպես մեկնարկային աշխատանքային տարբերակ չընդունել այն, քանի որ գրեթե զուրկ է գիտական, հետազոտական մոտեցումներից:		
4	Թաթուլ Ստեփանյան 08.11.2022 17:29:16	45. 2019-2021թթ. ժամանակահատվածում մեկ շնչին ընկնող համախառն առկայության որոշակի անկում նկատվում է մի քանի ապրանքատեսակների գծով: Առավել տեսանելի նվազումը տեղի է ունեցել վերը ներկայացված նույն կարևոր պարենային ապրանքների մասով: Պայմանականորեն կարելի է ենթադրել, որ այդ փոփոխությունները պայմանավորված են եղել Հայաստանում այդ ժամանակահատվածում տեղի ունեցող արտակարգ իրադարձություններով: Անհասկանալի ձևակերպում է, առանց հիմնավորման, տպավորություն է, որ վատ	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան խմբագրական փոփոխություն:

		թարգմանություն է: Վերախմբագրման կարիք կա:		
5	Թաթուլ Ստեփանյան 08.11.2022 17:26:13	Տեղական արտադրության ակտիվացմանն ուղղված ջանքերը պետք է բազմապատկվեն: Հասկանալի է, որ աճի ներուժը որոշ ապրանքների համար (օրինակ՝ ցորեն, գարի, ձեթ և շաքարավազ) սահմանափակ է: Փոխարենը պարենային ապրանքների ներմուծման փոխարինման զգալի ներուժ կա ցորենի, գարու, հատիկաընդեղենի, կաթի, տավարի, թռչնի և խոզի մսի մասով: Առաջարկում եմ վերամշակել, անհասկանալի է ինչ եք ուզում ասել:	Չի ընդունվել: Նշվել է սահմանափակ հնարավորությունների մասին՝ նկատի ունենալով, որ տվյալ ապրանքախմբերի համար հնարավոր է որոշ չափով ավելացնել արտադրության ծավալները, սակայն դրանք չեն կարող հասցվել այն մակարդակին, որ ապահովեն ամբողջական ինքնաբավություն:	
6	Թաթուլ Ստեփանյան 07.11.2022 15:34:00	2.2 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ գլխում հանդիպում ենք նման ձևակերպումների՝ Շուկաներում պարենային ապրանքների կայունության և առկայության պահպանում՝ աշխարհի բոլոր երկրների համար», կամ, "Հիմնական հավակնությունն է զարգացնել մարդկանց կարողությունները՝ պատրաստվել և դիմակայել տարատեսակ ցնցումների, ինչպես նաև դրանցից հետո արագ վերականգնվելու", և այսպես շարունակ: Իսկ հաջորդիվ ներկայավող ծուխումներում ուղղակի անրադարձ չկան այս հարցերին: Առաջարկում եմ հաջորդիվ բաժիններում, իրականացվելիք ծրագրերում պատշաճ անրադառնալ այս հարցերին և հստակ լուծումներ տալ:	Չի ընդունվել: Ներկայացված դիտարկման մեջ առկա ձևակերպումները վերցված են ռազմավարությունում ներառված պարենային անվտանգության վերաբերյալ կատարված պատմական ակնարկին, ինչպես նաև Պարենի համաշխարհային գագաթնաժողովում նախանշված դրույթին և ռազմավարության նախագծում դրանց վերաբերյալ լուծումներ չեն առաջարկվում, քանի որ ռազմավարությունը կառուցվել է այլ սկզբունքով՝ նախանշվել են մարտահրավերները, հիմնախնդիրները, նպատակները, ենթանպատակները և սահմանվել են դրանց կատարմանն ուղղված գործողությունների ծրագիրը:	

7	Թաթուլ Ստեփանյան 07.11.2022 15:19:42	Բազմաթիվ տերմիններ են օգտագործվում, սակայն չկա "սահմանումներ" բաժին, ինչը հնարավորություն կտար խուսաբել տարբեր մեկնաբանություններից, առաջարկում եմ ավելացնել:	Չի ընդունվել: Ռազմավարության նախագծում կիրառվող տերմինների սահմանումները հիմնականում տրված են «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով, իսկ օգտագործվող այլ տերմինները հանրահայտ են և չեն կարող ունենալ տարբեր մեկնաբանություններ:	